Համարը	*Տեսակը* Ինկորպորացիա
Տիպը Օրենսգիրք	*Կարգավիճակը* Գործում է
Սկզբնաղբյուրը ՀՍՍՀԳՍՏ 1985/23	*Ընդունման վայրը* Երևան
Ընդունող մարմինը Գերագույն խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը* 06.12.1985
Ստորագրող մարմինը	*Ստորագրման ամսաթիվը* 06.12.1985
Վավերացնող մարմինը	*Վավերացման ամսաթիվը*
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.06.1986	*Ուժը կորցնելու ամսաթիվը*

Ծանուցում

ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏԵ՛Ս ՀՈԴՎԱԾ 170.7-170.9, 327.1

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Հոդված 169[2]. ~~Պետական վիճակագրական~~ Պաշտոնական վիճակագրական դիտարկումների իրականացման համար անհրաժեշտ տվյալներ ներկայացնելու կարգը խախտելը կամ տվյալներն աղավաղելը

Իրավաբանական անձանց, օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների պաշտոնատար անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից ~~պետական վիճակագրական~~ պաշտոնական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելը կամ սահմանված կարգի խախտումով (սահմանված ժամկետների կամ ամբողջ ծավալի խախտումներով կամ աղավաղումներով) ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Նույն խախտումների կատարումն այն անձի կողմից, որը նշված խախտումների համար վարչական տույժի է ենթարկվել վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Քաղաքացիների կողմից օրենքով նախատեսված համատարած հաշվառումների ժամանակ հաշվառումների հարցաթերթերով նախատեսված տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Հոդված 244[5]. ~~Պետական վիճակագրության~~ Պաշտոնական վիճակագրության մարմինները

~~Պետական վիճակագրության~~ Պաշտոնական վիճակագրության մարմինները քննում են սույն օրենսգրքի 169[2] հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

~~Պետական վիճակագրության~~ Պաշտոնական վիճակագրության մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական լիազորված մարմնի տարածքային ծառայությունների ղեկավարները՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև քսանապատիկի չափով.

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական լիազորված մարմնի ղեկավարը և նրա տեղակալները՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև հիսնապատիկի չափով:

(244[5] - րդ հոդվածը լրաց. 03.12.96 ՀՕ-102)